

ՆԵՐԳԱՂԹՅԱԼՆԵՐԻ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ և ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԺԱՐԳՈՒՄ
ԴՐՍԵՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՖՐԱՆՍԵՐԵՆՈՒՄ

ABSTRACT

IMMIGRANTS' FRENCH IN THE CONTEXT OF SOCIO-LINGUISTIC TRANSFORMATION

France is a multicultural society where a variety of languages are spoken. With this variety however, French still remains the main language used in public and professional spheres. The native languages of immigrants has had its fair impact on French, particularly on a spoken level. Are these influences a direct threat for the Academic French? We think yes, because over time this impact becomes bigger and unmanageable. However, the Academic French continues to dominate in circles of senior citizens who sometimes announce their dissatisfaction with pampering of their language. What steps should be taken so that French does not become a mixed language? 1. First of all it is necessary to reduce the use of strange words (anglicisms, frenglish words, Arabian words) and increase the use of their French equivalents. 2. It's necessary to

* e-mail: z.arakelyan@ysu.am



This work is licensed under a Creative Commons
Attribution-NonCommercial 4.0 International License. © The Author(s) 2025

Received: 14/11/2025

Revised: 10/12/2025

Accepted: 12/12/2025

create, to open free centers for immigrants to learn not only French but French culture which is also important.

The French language is one of the richest languages in the world by its vocabulary and this linguistic richness makes French not only a beautiful language but also a practical one for precise communication in various contexts.

Key words: loanwords, coded language, vocabulary, frenglish, equivalent in French, the language of young people

ԱՄՓՈՓՈՒՄ

Ֆրանսիան բազմազգ երկիր է, և ներգաղթյալները, իհարկե, խոսում են տարբեր լեզուներով, բայց, այնուամենայնիվ, գերիշխող լեզուն համարվում է ֆրանսերենը, հատկապես հանրային և մասնագիտական ոլորտներում: Ներգաղթյալների մայրենի լեզուն ունենում է որոշակի ազդեցություն ֆրանսերենի վրա՝ մասնավորապես խոսակցական մակարդակում: Արդյո՞ք այդ ազդեցությունները ուղիղ սպառնալիք են ակադեմիական ֆրանսերենի համար, կարծում ենք՝ այո, քանի որ ժամանակի հետ այդ ազդեցությունը մեծանում է և դառնում անվերահսկելի: Այնուամենայնիվ, նորմավորված կամ այսպես կոչված ակադեմիական ֆրանսերենը շարունակում է մնալ արդի ավելի ավագ սերնդի շրջանակներում, և նույն ավագ սերունդը երբեմն արտահայտում է իր դժգոհությունը՝ կապված ֆրանսերենի աղավաղման խնդրի հետ: Ի՞նչ պետք է անել այս պարագայում, որպեսզի խուսափենք ֆրանսերենի՝ համակցված լեզու դառնալու հեռանկարից. առաջին հերթին նվազեցնել օտարալեզու բառերի կիրառումը (անգլիաբանություններ, ֆրանգլե, արաբերեն բառեր) և նախապատվությունը տալ գրական համարժեքներին: Երկրորդ՝ անհրաժեշտ է ստեղծել ֆրանսերենի ուսուցման անվճար կենտրոններ ներգաղթյալների համար, որտեղ նրանք կսովորեն ոչ միայն ֆրանսերեն, այլ նաև կծանոթանան ֆրանսիական մշակույթին, ինչը ևս կարևոր է:

Ֆրանսերենը համարվում է աշխարհի ամենահարուստ բառաֆոնդով լեզուներից մեկը, և լեզվական այդ հարստությունը

Ֆրանսերենը դարձնում է ոչ միայն գեղեցիկ, այլև գործնական՝ տարբեր համատեքստերում ճշգրիտ հաղորդակցության համար:

Բանալի բաներ. փոխառություններ, կողավորված լեզու, բռնապաշար, ֆրանզլե, ֆրանսերեն համարժեք, երիտասարդների լեզու

РЕЗЮМЕ

ФРАНЦУЗСКИЙ ЯЗЫК ИММИГРАНТОВ (АНГЛИЦИЗМЫ, ВЕРЛАН, ЖАРГОНИЗМЫ) В УСЛОВИЯХ СОЦИАЛЬНО-ЛИНГВИСТИЧЕСКОЙ ТРАНСФОРМАЦИИ

Франция-многонациональная страна, и иммигранты, конечно, говорят на разных языках, но, тем не менее, французский считается доминирующим языком, особенно в общественной и профессиональной сферах. Родной язык иммигрантов оказывает определенное влияние на французский, и внутри языка происходит ряд изменений, особенно на разговорном уровне.

Являются ли эти эффекты прямой угрозой академическому французскому языку, мы думаем, что да, поскольку со временем это влияние усиливается и выходит из-под контроля. Тем не менее, нормализованный или так называемый академический французский язык продолжает оставаться актуальным среди старшего поколения, которое в свою очередь иногда выражает свое недовольство в связи с искажением французского языка.

Что делать в этом случае, чтобы избежать перспективы превращения французского языка в более смешанный? 1. В первую очередь - уменьшить употребление иноязычных слов (англицизмы, франгле, арабские слова) и отдавать предпочтение литературным эквивалентам. 2. Открыть центры или курсы для иммигрантов, чтобы они смогли изучить не только французский язык но и французскую культуру что немаловажно. Французский считается одним из языков с самым богатым словарным запасом в мире, и это языковое богатство делает французский язык не только красивым, но и практичным для точного общения в различных контекстах.

Ключевые слова: заимствования, кодированный язык, словарный запас, франглиш, эквиваленты во французском, язык молодых людей

Լեզուն գտնվում է անընդհատ շարժման մեջ: Այն լեզուն, որով խոսում են ժամանակակից ֆրանսիացիները՝ մանավանդ երիտասարդները, շատ է տարբերվում իրենց նախնիների լեզվից: Ժամանակի ընթացքում տեղի ունեցած զարգացման արդյունքում երիտասարդների և մեծահասակների բանավոր խոսքում առաջացել են զգալի տարբերություններ: Երիտասարդների խոսակցական լեզուն հաճախ ենթարկվում է քննադատության և ումանց կողմից ներկայացվում որպես սպառնալիք գրական լեզվի համար:

Սույն հոդվածը նպատակ ունի ուսամնասիրելու այն արտաքին և ներքին ազդեցությունները, որոնք ուղղակիորեն ազդում են ֆրանսերենի վրա՝ գրական լեզվից դարձնելով ներգաղթյալներին հասանելի համակցված լեզու: Ուսումնասիրում ենք անգլիաբանությունների, Ժարգոնի տարածվածությունը լեզվում և վերջիններիս հարկի և անհարկի կիրառման հանգամանքը: Առաջարկում ենք նաև ուղիներ, որոնք թույլ կտան նվազեցնել օտարաբանությունների ազդեցությունը ֆրանսերենի վրա, ինչպես նաև լիարժեք շեղումը ակադեմիական ֆրանսերենից:

Ֆրանսիական Ակադեմիային կից, գոյություն ունի նաև այսպես կոչված «փողոցային ակադեմիա»: Այսօր լեզվի փոփոխության դեկլը գտնվում է դեռահասների և երիտասարդների ձեռքում: Նրանք իրենց բառապաշարը ձևավորում են փողոցում՝ համացանցային լեզվի միջոցով՝ ներառելով մեծ թվով անգլիաբանություններ:

Ֆրանսիայում ներգաղթյալների կողմից կիրառվող հիմնական լեզուն, իհարկե, ֆրանսերենն է, հատկապես հանրային և մասնագիտական գործունեության շրջանակներում: Բայցևայնպես, շատերը շարունակում են խոսել իրենց մայրենի լեզվով ընտանիքի անդամների և ընկերների հետ: Ֆրանսերենից հետո ներգաղթյալների կողմից կիրառվող ամենատարածված լեզուներն են արաբերենը (arabe), կրեոլերենը (créole), բերբերերենը (berbère) և այլն:

Բազմաթիվ ներգաղթյալների երեխաներ մեծացել են բազմալեզու միջավայրում և կրթությունը ստացել են միաժամանակ ֆրանսերենով և իրենց մայրենի լեզվով: Ըստ վիճակագրական տվյալների՝ ներգաղթյալների երեխաների հիսուներկու տոկոսից ավելին տիրապետում են և՛ ֆրանսերենի և՛ առնվազն մեկ այլ օտար լեզվի:

Ըստ INSEE հեղինակավոր վիճակագրական կայքի 2023 թվականի ցուցանիշների, Ֆրանսիայում ապրում է 7,3 միլիոն ներգաղթյալ, որը կազմում է Ֆրանսիայի ընդհանուր բնակչության 10,7% ը (INSEE paru le 22.05.2025)

Ըստ 2019 թվականի վիճակագրական ցուցանիշների, Ֆրանսիայում աշխատող ներգաղթյալների քառասունվեց տոկոսի աշխատանքային լեզուն ֆրանսերենն է: Իսկ արդեն 2022 թվականի վիճակագրական տվյալները ցույց են տալիս ֆրանսախոսների թվի տոկոսային աճ՝ դառնալով 60%: Ֆրանսերենից հետո երկրորդ հորիզոնականում անգլերենն է՝ 54%, այնուհետև չինարենը՝ 20%,

արաբերեն՝ 11%, պորտուգալերեն՝ 3% (IM n°115 La pratique du français des primo-arrivants dans leur milieu professionnel, 30 janvier, 2025):

Ինչպես ցույց են տալիս վիճակագրական տվյալները, տարեցտարի ավելանում է ներգաղթյալների թիվը Ֆրանսիայում: Այն հանգամանքը, որ վերջիններս չեն խոսում և չեն կարող խոսքում կիրառել ակադեմիական ֆրանսերենը, համարվում է նորմալ: Այս պարագայում ի՞նչ է տեղի ունենում խոսակցական ֆրանսերենի հետ, ի՞նչ փոփոխությունների է ենթարկվում լեզուն՝ կիրառվելով տվյալ մարդկանց կողմից: Կարող ենք փաստել, որ բացի արտասանական, հնչյունային և շեշտադրական փոփոխություններից, տեղի է ունենում նաև բառապաշարային փոփոխություն: Շատ հաճախ կարող ենք տեսնել բառերի զուգադրում, մասնավորապես դա տեղի է ունենում անգլիախոս շրջանակներում: Արդյունքում ունենում ենք “ֆրանգլե” կոչվող երևույթը, որը շատ տարածված է այսօրվա Ֆրանսիայում և կիրառվում է ինչպես ներգաղթյալների կողմից, այնպես էլ բուն ֆրանսիացի երիտասարդների կողմից, օրինակ՝ **“supporter”, “week-end”, “to boost”, “ASAP”, “un date”, “challenge”** և այլն:

Մերօրյա խոսակցական ֆրանսերենում չենք կարող հերքել նաև անգլիաբանությունների ահռելի տարածվածության փաստը և վերջիններիս ազդեցությունը ֆրանսերենի վրա: Այդ ազդեցությունը այնքան մեծ է, որ նույնիսկ ֆրանսիացի երիտասարդները

նախապատվությունը տալիս են ֆրանսերենում գոյություն ունեցող բառի անգլերեն տարբերակին: Պատճառները, իհարկե, տարբեր են. առաջին հերթին դա հնարավորություն է տալիս խոսքը ավելի հասանելի դարձնելու հանրության լայն շերտերին, որոնց թվում կարող են լինել նաև ներգաղթյալներ, որոնց համար անգլերենը, որպես միջազգային լեզու ընկալելը ավելի հեշտ է, քան ֆրանսերենը: Մյուս կարևոր պատճառը նորաձև երևալն է:

Քվեբեկում լույս տեսած անգլիաբանությունների բառարանում Կոլպրոնը դրանք բաժանում է հետևյալ խմբերի.

1. **Իմաստային կամ իմաստաբանական անգլիաբանություններ** (application pour candidature, argument pour discussion, compléter pour remplir, questionner pour mettre en doute)
2. **Բառային անգլիաբանություններ** (break au lieu de pause, tip au lieu de pourboire, switcher au lieu de remplacer ou d'échanger, canceler au lieu d'annuler)
3. **Շարահյուսական անգլիաբանություններ** (jusqu'à date au lieu de jusqu'à maintenant, demander une question au lieu de poser une question)
4. **Ձևաբանական անգլիաբանություններ** (les actifs d'une société (the assets): l'actif)
5. **Հնչյունաբանական անգլիաբանություններ** (zoo prononcé [zu] au lieu de [zo] ou [zoo])

6. **Գծագրեալ անգլիաբանություններ** (l'emploi des guillemets anglais (" ") à la place des français (« »)) [Colpron, 4^{ième} édition, 1998]

Անգլիաբանությունները համարվում են փոխառություններ, որոնց մեծ մասը անհարկի են և որոնց համարժեքը ֆրանսերենն ունի:

Անգլիաբանություն	Ֆրանսերեն համարժեք
Business	Affaires, commerce
Deadline	Date limite, date butoir
Feedback	Retour d'information, reaction
To-do list	Liste des choses à faire
Brainstorming	Remue-ménige
Ranking	Classement
Overtime	Heures supplémentaires
Speaker	Conférencier
Interview	Entretien
Ketchup	Sauce tomate
Jockey	Cavalier de sport équestre

Կան նաև այնպիսի փոխառություններ, որոնց համարժեքը ֆրանսերենը չունի : Վերջիններս հիմնականում վերջին տարիներին լայն տարածում գտած տեղեկատվական տեխնոլոգիաների և արհեստական բանականություն ոլորտից են, որոնց ծագման երկիրը

ԱՄՆ ն է, հետևաբար, տերմինները՝ անգլերեն : Օրինակ **“mail”** բառը, որը կարող փոխարինվել **“courriel”**- ով , բայց **“mail”**-ը ունի ավելի **“էլեկտրոնային հասցե”** իմաստը, որի համար ֆրանսերենում կա **“courriel électronique”** տարբերակը, սակայն կիրառելիությամբ զիջում է անգլերեն **“mail”** բառին: **“Hacker”** ծովահեն բառը, ֆրանսերեն համարժեքը՝ **“pirate informatique”**, բայց անգլերեն **“hacker”** բառը շատ ավելի կիրառելի է խոսակցական լեզվում, **“software”** բառը ֆրանսերենում փոխարինվում է **“logiciel”** տարբերակով, սակայն **“software”** բառը հաճախ կհանդիպենք տեխնիկական տեքստերում, **“internet”** և **“web”** բառերի ֆրանսերեն համարժեքները **“ligne”**, **“internaute”**, **“toile”** տարբերակներն են, որոնք շատ ցածր կիրառելիություն ունեն լեզվում : Կան նաև մի շարք անգլիաբանություններ, որոնք պատկանում են այլ ոլորտների և որոնք կրկին կա՛մ չունեն համարժեքը ֆրանսերենում, կա՛մ համարժեքները գրեթե չեն օգտագործվում, ինչպես **“happy-hour”**, ֆրանսերեն՝ **“heure heureuse”**, որը գրեթե չի կիրառվում լեզվում, **“best-seller”**, ֆրանսերեն՝ **“ouvrage à succès”**, կրկին քիչ կիրառելի, **“low cost”**, ֆրանսերենում՝ **“à bas prix”**, իսկ **“sponsor”** և **“match”** փոխառությունները ֆրանսերենում չունեն համարժեք տարբերակ, **“brunch”** բառը անգլերեն **“breakfast”** և **“lunch”** բառերի միաձուլված ձևն է:

Ժամանակակից ֆրանսիացի երիտասարդների խոսակցական լեզվին բնորոշ են նաև ժարգոնի, կառուցվածքի և բառապաշարի տարբերությունները գրական լեզվից:

Բառարաններում «Ժարգոն» բառը սահմանվում է որպես «սոցիալական որևէ խմբին բնորոշ խոսք», ինչպես նաև «նույնականացման մի գործառույթ, որը հնարավորություն է տալիս տվյալ խմբի անդամներին փոխադարձաբար ճանաչել միմյանց, և իրենց տարանջատումը հասարակության մյուս խմբերից արտահայտել իրենց խոսելաձևի տարբերությամբ»:

Այս սահմանումը կարող է վերաբերել նաև **«verlan»**- ին՝ ժամանակակից երիտասարդության ժարգոնային լեզվին Ֆրանսիայում, քանի որ արտահայտում է որոշակի մշակութային տարբերություն, ինչպես նաև նմանություն, որը հատուկ է արվարձանների ֆրանսիացի երիտասարդության մի հատվածին: Ուստի, կարելի է ասել, որ ժարգոնը իր լայն իմաստով միաժամանակ սոցիալ-լեզվաբանական և հասարակական երևույթ է:

Ինդիանայի համալսարանի պրոֆեսոր Ա. Վալդմանը, ժարգոնի մասին իր ուսումնասիրության մեջ խոսում է ֆրանսերենի ժարգոնի երեք գործառույթների մասին: [A.Valdman, The French Review, Vol.78, No.5, Apr.,2005]

1. Երիտասարդների կողմից ժարգոնի իմացությունը և գործածությունը պայմանավորված է լեզվի այնպիսի գործառույթով, որի արտահայտություններից մեկը բառի կրճատումն է: Այսպես, **“professeur”** կամ **“faculté”** ասելու փոխարեն ավելի արագ կարելի է արտահայտվել՝ ասելով՝ **“prof”** կամ **“fac”**: Շնորհիվ բառերի կրճատման,

երիտասարդները կարողանում են խոսել շատ արագ. այստեղ գործում է խնայողության կանոնը:

2. Ժարգոնի երկրորդ գործառույթը քողարկելն է: Ժարգոնը հնարավորություն է տալիս խոսողներին թաքցնելու տեղեկատվությունը իրենց խմբից դուրս գտնվող մարդկանցից: Նկարագրելով ամերիկացի երիտասարդների ժարգոնը՝ էքերթը հաստատում է գրեթե նույն տեսակետը: Նա ասում է, որ ժարգոնը առանձնացնում է երիտասարդներին, նրանց տալիս է անհատական խոսք, որով նրանք տարբերվում են ուրիշ խոսողներից: Շնորհիվ քողարկող գործառույթի՝ նրանք, ովքեր հասկանում են ժարգոնը, տարբերվում են նրանցից, ովքեր այն չեն հասկանում: Նրանք, ովքեր հասկանում են տվյալ ժարգոնային խոսքը, կազմում են առանձին խումբ:
3. Ժարգոնի գոյության մեկ այլ պատճառ բխում է նրա արտահայտչական բնույթից, որի շնորհիվ ժարգոնը դառնում է նույնականացման գործառույթ: Նրա գործածությունը պայմանավորված է երիտասարդների՝ միմյանց հետ նույնականանալու ձգտմամբ: Դեռահասները միավորվում են նրանց հետ, ովքեր խոսում են նույն լեզվով, ովքեր նման են իրենց: Սակայն ժարգոնը նաև հեռացնում

ու մեկուսացնում է երիտասարդներին իրենց շրջապատող աշխարհից:

Ֆրանսիացի երիտասարդությունը ձգտում է լինել ինքնուրույն և միասնական ընդդեմ հասարակության այն խավի, որն իրեն ճնշում է: Սոցիալական ճնշումների նկատմամբ ունեցած երիտասարդների բողոքն իր արտահայտությունն է գտել ժամանակակից ռեպ ժանրի ստեղծագործություններում:

Ինչպես արդեն նշեցինք, ժարգոնի տեսակներից են **“Verlan”**-ը (բառի շրջված տարբերակը) և **“Louchébem”**-ը (մսագործների ժարգոնը):

“Louchébem”-ը երևան է եկել 19-րդ դարի առաջին կեսին: Առաջացման գործընթացի տեսանկյունից այն նման է **“Verlan”**-ին: **“Louchébem”**-ից որոշ բառեր այսօր դարձել են շատ կիրառելի և իրենց ուրույն տեղն ունեն ֆրանսերենի խոսակցական լեզվում. օրինակ՝ **“cher-lerche”**; **“fou-loufoque”** և այլն: Մինչև այսօր այն օգտագործվում է որոշակի շերտի՝ մասնավորապես մսագործների կողմից. **“bonjour-lonjourbem”**; **“café-laféquès”**; **“femme-lamfé”**; **“fou-louf”**; **“pardon-lardonpem”** :

Դեռևս հայտնի չլինելով **“Verlan”** անվամբ, այն գոյություն է ունեցել միջնադարում և սկսվել է կիրառվել հասարակության կողմից 16-րդ դարում: **“Verlan”**-ի կիրառությունը զարգացել է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Սկզբում այն

կիրառվել է Փարիզի արվարձաններում, ինչպես նաև գաղթյալների և բանվորների շրջապատում՝ հետզհետե ներգրավվելով բազմազան հասարակական շերտեր՝ շնորհիվ կինոյի և երաժշտության:

Շնորհիվ հաղորդակցության նոր միջոցների՝ մասնավորապես SMS-ների զարգացման, **“Verlan”**-ը դարձավ ավելի կիրառելի: Այնուհետև հասարակության միջին և բարձր շերտերի ներկայացուցիչները, որոնք համարվում են հաղորդակցության ժամանակակից միջոցների օգտատերերը, նույնպես սկսեցին այն կիրառել: **Verlan**-ի ակնհայտ օրինակ է բելգիացի հայտնի երգիչ **Stromae**-ի անունը, որը եկել է **“maestro”** բառից:

Նկարագրելով ֆրանսիացի երիտասարդներին՝ Սուրդոն նկատում է, որ գրելու նոր տեսակ է առաջացել՝ **SMS (short message service)**, որը թարգմանաբար նշանակում է կարճ հաղորդագրություններ ծառայություն [M.Sourdot, Argot, jargon, jargot, Langue française, n°90, pp.13-27]: Ըստ նրա, ֆրանսիացի երիտասարդների համար ժարգոնի գործածությունը SMS-ի մեջ ավելի ձեռնտու է: SMS-ի լեզուն հասկանալու համար դիտարկենք ժարգոնի կառուցվածքը: Երիտասարդների խոսելաձևում ամենից հաճախ կարելի է հանդիպել բառի կրճատման (truncation des mots): Ինչպես վերևում նշեցինք, այս երևույթը կիրառվում է խոսքն ավելի արդյունավետ դարձնելու համար: Ֆրանսերենում գոյություն ունեն բառը կրճատելու մի քանի եղանակներ. օրինակ, կարելի է պարզապես կրճատել **“télévision”** բառը **“télé”**- ի, այսինքն՝ կրճատել բառի վերջին մասը: Համանման երևույթ տեղի է ունենում նաև

անգլերենում, օրինակ **“téléphone”** բառում կրճատվում է բառի առաջին հատվածը՝ **“phone”**: Հաճախ, ֆրանսերենում բառը կրճատելու ժամանակ վերջավորության վրա ավելացվում է **“o”**, ինչպես **“resto”**՝ փոխանակ **“restaurant”**:

“Beur” բառը, որ նշանակում է **“աքաբ”**, հաստատուն կիրառություն ունի ֆրանսերենի գրական լեզվում, և խոսողները հիանալի հասկանում են նրա իմաստը: Արաբական լեզուները գործուն ազդեցություն են ունենում ներգաղթողների ֆրանսերենի վրա: Արաբական լեզուների ներգործությունը նկատվում է ոչ միայն երիտասարդների, այլև մեծահասակների խոսակցական լեզվում: Ֆրանսախոսների մեծ մասը չի տարբերակում **“é”**-ն **“è”**-ից: Զարմանալի չէ, որ արաբական լեզուները ևս չեն տարբերում այս երկու՝ փակ և բաց e [ɛ]-երը :

Մեկ այլ հատկանիշ ևս, որը վկայում է ֆրանսերենի վրա արաբերենի ազդեցության մասին. խոսքը **“d”** և **“t”** բաղաձայների պայթաշփական դառնալու մասին է:

Ի վերջո, գոյություն ունի երիտասարդների խոսելաձևին բնորոշ մեկ այլ գիծ՝ ձգտում միանալու քաղաքակենտրոնացմանը: Ըստ Վալդմանի, երիտասարդ ֆրանսիացիները փոխառում և կիրառում են խոսելաձևի մի տեսակ, որն արտացոլում է քաղաքն իր արվարձաններով: Ակնհայտ է, որ քաղաքային այդ հատվածները ունեն լեզվաբանական ուրույն հատկանիշներ, որոնք իրենց արտացոլումն են գտնում երիտասարդների խոսակցական լեզվի մեջ: Դիտարկումները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր քաղաքային

գոտի և բնակավայր Ֆրանսիայում զարգացնում է իր սեփական լեզուն՝ ածանցված գրական լեզվից: Ֆրանսերենում բաղաձայների պայթաշփականացումը (affrication) և “r”-ի երանգավորումը արտացոլում է աֆրիկացիների և արաբների գործուն ազդեցությունը, որոնք հիմնականում բնակվում են քաղաքի արվարձաններում:

Քաղաքային բարբառների ուսումնասիրությունները փաստում են, որ երիտասարդների խոսելաձևը արտացոլում է այնտեղ ապրող էթնիկ ազգաբնակչության լեզուն: Եթե անգամ նման խոսելաձևն առաջացել է ֆրանսերենի գրական լեզվի հիմքի վրա, այնուամենայնիվ նրանում առկա է ներգաղթյալների լեզուների կնիքը: Վաթսունական թվականներին ձևավորվեց “**pied noir**” տերմինը, որը բնութագրում էր Հյուսիսային Աֆրիկայից Ֆրանսիա գաղթածներին՝ մասնավորապես Ալժիրից հայրենադարձվածներին: Ութսունական թվականներին նրանց երեխաներին սկսեցին անվանել “**les beurs**”: Կրկին անդրադառնալով տվյալ արտահայտությանը նշենք, որ այն ստեղծվել է “**Verlan**”-ի եղանակով: Վերցրել են “**les arabes**” բառը, շրջել և ստեղծել մի նոր տերմին, որը հետագայում դարձել է հասարակության մի առանձին խմբի անուն՝ “**les beurs**”:

Ամփոփելով հոդվածը կարելի է ասել, որ ինչպես գրական լեզուն, այնպես էլ երիտասարդների խոսակցական լեզուն անընդհատ զարգանում է, քանի որ շարունակում են զարգանալ նաև սոցիալական այն պայմանները, որոնք ձևավորում են այդ լեզուն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Colpron, G., Forest, C., & Boudreau, D. (1998). Le dictionnaire des anglicismes (4e éd.). Québec.
2. Eckert, P. (2003). Language and adolescent peer groups. *Journal of Language and Social Psychology*, 22(1), 112–118. New York.
3. Jamin, M., Trimaille, C., & Gasquet-Cyrus, M. (2006). De la convergence dans la divergence: Le cas des quartiers pluriethniques en France. *Journal of French Language Studies*, 16 (3), 1–20. University of Arizona, USA.
4. Paul, E. (1985). Étude des régularités morpho-syntaxiques du verlan contemporain (Study of morphosyntactic regularities of contemporary Verlan), Mémoire de maîtrise. Université de Paris 3.
5. Valdman, A. (2000). La langue des faubourgs et des banlieues, de l'argot au français populaire. *French Review*, 73 (6), pp.1120–1135. USA.